

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Կառավարության, Վարչապետի որոշումներով, կարգադրություններով, հանձնարարականներով և հրահանգներով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գերակա խնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. <<Չվարթոնոց>> միջազգային օդանավակայանի տարածքի բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերին և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների համար նոր բնակարաններով ապահովելու նպատակով՝ շարունակվում են կառուցման աշխատանքները և կատարվել է շուրջ 3,2 մլրդ. դրամի աշխատանքներ:

2. Օդային երթևեկության կառավարման ավտոմատացված համակարգի արդիականացման նպատակով Եվրոկոնտրոլ կազմակերպության մասնագետների հետ համատեղ քննարկվել են օդային երթևեկության կառավարման ավտոմատացված նոր համակարգի և CFMU-ի միջև ավտոմատացված հաղորդագրությունների (թռիչքային պլաններ և այլն) փոխանակման առանձնահատկությունների, ինչպես նաև օդային երթևեկության կառավարման ավտոմատացված նոր համակարգի անվտանգության մակարդակի գնահատման և անվտանգության փաթեթի հետ կապված հարցերը:

Անվտանգության մակարդակի գնահատման և անվտանգության փաթեթի մշակման, ինչպես նաև այլ իրականացված աշխատանքների արդյունքում 2013 թվականի դեկտեմբերի 9-ին օդային երթևեկության կառավարման <<Գալակտիկա>> ավտոմատացված համակարգը և <<Մուլտիֆոնո Մ800ԻՊ>> ձայնային կապի համակարգը հանձնվել է շահագործման, ինչպես նաև ներդրվել է թռիչքային պլանների նոր FPL2012 ձևաչափը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն մասնագետների նոր վկայականների տրամադրման նախապատրաստական աշխատանքներն ավարտված են: Գլխավոր վարչության կողմից մշակվել և ներդրվել է Եվրոպական ավիացիոն իշխանությունների (EASA-ի) պահանջներին համապատասխանող "ARM-AIR CREW" նոր ձեռնարկը և 2013 թվականի հունիս ամսից սկսվել է նոր տեսակի վկայականների տրամադրման գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավ շահագործող կազմակերպությունների թռիչքային ձեռնարկները Եվրոպական ավիացիոն իշխանությունների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով Գլխավոր վարչության կողմից մշակվել և ներդրվել է Եվրոպական ավիացիոն իշխանությունների (EASA-ի) պահանջների համաձայն ARM-OPS-1 նոր ձեռնարկը, որն իր մեջ պարունակում է EU-OPS-1-ի պահանջները և գործող բոլոր օդանավ շահագործող կազմակերպությունների իրենց թռիչքային ձեռնարկները համապատասխանեցվել են ARM-OPS-1-ի պահանջներին:

4. «Հայաստանի Հանրապետության և Եվրամիության միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի կնքման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Ընթացակարգի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը նախապատրաստել է Հայաստանի Հանրապետության վարչապետի անունից Եվրոպական հանձնաժողովի նախագահին և փոխնախագահին հասցեագրված գրությունը, որն արդեն ստորագրվել է և դիվանագիտական ուղիներով փոխանցվել է Եվրոպական կողմին: Նամակի հիման վրա Եվրոպական հանձնաժողովի Շարժունակության և տրանսպորտի գլխավոր տնօրինության կողմից կատարատվի բանակցային մանդատի համար համապատասխան իրավական փաստաթուղթ՝ կցելով անհրաժեշտ հիմնավորումները, և այն կներկայացվի Եվրոպական խորհուրդ՝ ԵՄ անդամ-պետությունների քննարկմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի թիվ 22-ի նիստի արձանագրությամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության օդային փոխադրումների բնագավառի ազատականացման հայեցակարգ»-ը և 2013 թվականի հոկտեմբերի 23-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ապահովման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումները հաստատելու մասին» թիվ 1248-Ա որոշումը:

Երկկողմանի միջազգային կապերն ընդլայնելու նպատակով, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին իրենց համապատասխան տարածքների և տարածքներից դուրս» համաձայնագիրը ստորագրվել է 2012 թվականի նոյեմբերի 20-ին Աբու-Դաբի քաղաքում և ներկայումս գտնվում է վավերացման փուլում:

2. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» նոր համաձայնագիրը ստորագրվել է 2012 թվականի նոյեմբերի 29-ին Երևան քաղաքում և ներկայումս գտնվում է վավերացման փուլում:

3. 2011 թվականի հոկտեմբերի 3-ից 6-ը Երևանում անցկացված հայ-քուվեյթյան միջկառավարական հանձնաժողովի նիստի շրջանակներում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Քուվեյթի Պետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը 2013 թվականի փետրվարի 7-ին վավերացվել է:

4. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բահրեյնի Թագավորության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին»⁷ համաձայնագրի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է արժանացել 2012 թվականի մարտի 15-ի թիվ 296-Ա որոշմամբ, անցել է «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներպետական ընթացակարգերը և լրամշակված տարբերակը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ ստորագրմանն ուղղված հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

5. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին»⁷ համաձայնագրի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է արժանացել 2012 թվականի մարտի 15-ի թիվ 298-Ա որոշմամբ, անցել է «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներպետական ընթացակարգերը, լրամշակված տարբերակը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ ստորագրմանն ուղղված հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

6. 2013 թվականի հոկտեմբերի 22-ին և 23-ին Իսրայելի Պետության քաղաքացիական ավիացիայի իշխանությունների պատվիրակության հետ Գլխավոր վարչությունում անցկացվել են խորհրդակցություններ՝ քննարկելու իսրայելական կողմից առաջարկված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի նախագծի դրույթները:

7. Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ավիացիոն իշխանությունները ներկայացնող պատվիրակությունների միջև 2013 թվականի մարտի 12-ից 13-ն Երևանում անցկացվել են երկկողմանի խորհրդակցություններ՝ քննարկելու և երկու երկրների միջև առկա օդային հաղորդակցությունների բնագավառում երկկողմ համագործակցությունը

խթանելու նպատակով: Հանդիպման արդյունքներով ստորագրվել է Խորհրդակցությունների արձանագրություն:

8. Քաթարի Պետության և Հայաստանի Հանրապետության ավիացիոն իշխանությունները ներկայացնող պատվիրակությունների միջև 2013 թվականի հունիսի 10-ից 11-ն Երևանում անցկացվել են երկկողմանի խորհրդակցություններ՝ քննարկելու և երկու երկրների միջև օդային հաղորդակցությունների բնագավառում երկկողմ համագործակցությունը խթանելու նպատակով: Հանդիպման արդյունքներով ստորագրվել է Խորհրդակցությունների արձանագրություն:

9. 2013 թվականի նոյեմբերի 7-ին Գլխավոր վարչությունում անցկացվել են երկկողմանի քննարկումներ Իրաքի քաղաքացիական ավիացիայի վարչության պետի գլխավորած պատվիրակության հետ՝ քննարկելու երկու պետությունների միջև կանոնավոր չվերթերի իրականացման հնարավորությունները և օդային հաղորդակցությունների զարգացման հեռանկարները: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև օդային հաղորդակցությունների մասին երկկողմանի համաձայնագրի նախագծին, ինչի կապակցությամբ իրաքյան կողմը փոխանցել է համաձայնագրի իրաքյան նախագիծը, որն իրաքյան կողմից կներկայացվի նաև դիվանագիտական ուղիներով:

10. Ավստրիայի ավիացիոն իշխանությունների հետ փոխհամաձայնեցվել է նոր համաձայնագրի նախագիծը:

11. 2013 թվականի դեկտեմբերի 24-ին Մոսկվայում կայացած երկկողմանի խորհրդակցությունների ընթացքում <<<Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին>> համաձայնագրի Հավելվածը փոխարինվել է նոր խմբագրությամբ Հավելվածով:

Գլխավոր վարչության համապատասխան մասնագետները մասնակցել են «Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի (ԵԿԱԿ) և Միացյալ ավիացիոն իշխանությունների (ՄԱԻ) ուսումնական կենտրոն» կազմակերպությունների կողմից 2012 թվականի համագործակցության ծրագրի շրջանակներում անդամ-երկրներին առաջարկված ուսումնական դասընթացներին:

Գլխավոր վարչությունը թոնիքների անվտանգության մակարդակի բարձրացման համար և թոնիքային պիտանիության հարցերով շարունակել է համագործակցությունը միջազգային և օդանավ արտադրող կազմակերպությունների հետ:

Ծարունակվել է համագործակցությունը ՌԴ Ուլյանովսկ քաղաքի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) և Գլխավոր վարչության միջև: Այդ համագործակցության շրջանակներում Գլխավոր վարչությունը ստացել է առաջարկություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին 2013-2014 ուսումնական տարվանից ընդունել Ուլյանովսկի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) Թոնիքային ապարատների շահագործման բաժին՝ ուսուցումը իրականացնելով ՌԴ բյուջեի միջոցների հաշվին: Այդ նպատակով Գլխավոր վարչության կողմից տրվել է մրցույթի հայտարարություն, իրականացվել է մրցույթ, որի արդյունքում առավելագույն միավորներ հավաքած դիմորդների փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջոցով ներկայացվել են ՌԴ կրթության և գիտության նախարարություն, որից հետո դիմորդները Ուլյանովսկի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանում (ինստիտուտում) անցել են համապատասխան բուժզննում և ներկայումս ուսանում են վերոնշյալ մասնագիտությամբ:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված անդամավճարների գծով պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում կատարված են:

Գլխավոր վարչության աշխատակիցները իրականացրել են «Չվարթնոց» օդանավակայանում ուղևորների սպասարկման գործընթացի նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև համագործակցել են Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում իրենց գործառույթներն իրականացնող պետական կառավարման այլ մարմինների հետ՝ աջակցելով նրանց առջև դրված խնդիրների կատարմանը: Պարբերական վերահսկողություն է իրականացվել «Չվարթնոց» օդանավակայանի

աւերողորմային միջոցների և ավիաընկերությունների շահագործողական վիճակների նկատմամբ:

2013 թվականի ընթացքում Գլխավոր վարչության կողմից սահմանված կարգով ուսումնասիրվել, վերլուծվել և համապատասխան ընթացք է տրվել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից, Հայաստանի Հանրապետության կառավարությունից, օրենսդիր և գործադիր մարմիններից ու անհատ քաղաքացիներից ու կազմակերպություններից ստացված թվով 4399 գրությունների:

Գլխավոր վարչությունը հասարակայնության հետ կապերի առումով հաշվետու տարում ակտիվ համագործակցել է ՉԼՄ-ների հետ: Համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու հասարակությանը հետաքրքրող խնդիրների պարզաբանումները լուսաբանվել են տպագիր մամուլով, ռադիոյով և հեռուստատեսությամբ: Հասարակության իրազեկման գործում մեծ նշանակություն ունեցող նորացված Գլխավոր վարչության պաշտոնական երկլեզու (հայերեն, անգլերեն) ինտերնետ կայքում տեղադրվում են Գլխավոր վարչության գործունեության, Հայաստանի քաղաքացիական ավիացիայի ոլորտին վերաբերող նորությունները:

Գլխավոր վարչության աշխատակազմի կողմից հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են օրենքների նախագծերի հետ կապված հետևյալ աշխատանքները

1. Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել <<Ավիացիայի մասին>> ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

2. Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող եվ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն են ներկայացվել հետևյալ նորմատիվային որոշումների նախագծերը.

1. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ին 1448-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, որը ընդունվել է 2013 թվականի հունվարի 10-ի N 7-Ն որոշումամբ:

2.<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 19-ի N744-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, որն ընդունվել է 2013 թվականի մայիսի 16-ի N 511-Ն որոշումով:

3. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի N 940-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, որը ընդունվել է 2013 թվականի օգոստոսի 29-ի N 927-Ն որոշումամբ:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն են ներկայացվել և պետական գրանցում են ստացել Գլխավոր վարչության պետի հետևյալ նորմատիվային գերատեսչական իրավական ակտերը.

1. <<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հոկտեմբերի 15-ի N 142-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 06.02.2013թ. N 22-Ն հրամանը:

2. <<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հուլիսի 21-ի N 98-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 08.02.2013թ. N 23-Ն հրամանը:

3. <<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2006 թվականի հունվարի 9-ի N 7-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 10.04.2013թ. N 61-Ն հրամանը:

4. <<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի մարտի 9-ի N 41-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 02.07.2013թ. N 114-Ն հրամանը:

5. <<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի մայիսի 14-ի N 79-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 02.07.2013թ. N 111-Ն հրամանը:

6. <<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 10-ի N 53-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 02.07.2013թ. N 112-Ն հրամանը:

7. <<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի նոյեմբերի 19-ի N 212-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 02.07.2013թ. 2-ի N 113-Ն հրամանը:

2013 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն օդային տրանսպորտով տեղափոխվել է 1.758.244 ուղևոր, 2012 թվականի համեմատ նվազել է 0.3 % -ով, ինչը պայմանավորված է սույն թվականի ապրիլի 1-ից <<Արմավիա>> ավիաընկերության չվերթերի դադարեցման հետ:

ԹՈՒՉՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. 2013 թվականի առաջին կիսամյակում տրվել են քաղաքացիական օդանավի թռիչքային պիտանիության 41 սերտիֆիկատ և օդանավի ադմուլի 16 սերտիֆիկատ, ինչպես նաև՝ օդանավի ռադիոկայանի 50 վկայական ու օդանավի թռիչքի 12 թույլտվություն:

2. 2013 թվականի առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրում գրանցվել է 46 օդանավ: Նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օդանավերի պետական ռեգիստրից հանվել է 11 օդանավ:

3. Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի թվով 43 տեսչական ստուգումներ կատարվել են Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվել են օտարերկրյա օդանավերի թվով 64 ստուգումներ, համաձայն SAFA ծրագրի, և կատարված ստուգումների հաշվետվությունները գրանցվել են տվյալների բազայում:

5. Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ընկերությունների կողմից վտանգավոր բեռների օդային փոխադրման սպասարկման աշխատանքների վերաբերյալ ուսումնասիրություններ և տրվել է 5 թույլտվություն:

6. Իրականացվել է թռիչքային պիտանիության պահպանման 6 կազմակերպությունների և օդանավերի տեխնիկական սպասարկման 6 կազմակերպությունների սերտիֆիկացում:

7. Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից քննարկվել և տրվել է թվով 527 վկայականներ ու այլ թույլտվություններ թռիչքային անձնակազմի անդամներին, ինժեներատեխնիկական կազմին, բորտուղեկցորդներին և օդային երթևեկության կարգավարներին:

ՕՐԱՆԱՎԱԿԱՑԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ ԵՎ ՕՐԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Մշակվել են օդային երթևեկության կազմակերպում (սպասարկում), անրոնավիզացիոն կապ և դիտարկում, անրոնավիզացիայի օդերևութաբանական ապահովում, անրոնավիզացիոն տեղեկատվության ծառայություն իրականացնող կազմակերպություններին թույլտվություն տալու գործընթացի ուղեցույցը և գործնական ու տեսական ուսումնասիրությունների հարցաթերթիկները:

2. Ուսումնասիրվել է Կապան քաղաքի օդանավակայանի վերագործարկման հնարավորությունները: Մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացվել վերագործարկման միջոցառումների ծրագիրը:

3. Մշակվել, ՀՀ Պաշտպանության նախարարության հետ համաձայնեցվել և հրապարակման է ներկայացվել նոր օդային մայրուղի:

4. Չմեռային ժամանակաշրջանում սահմանվել է վերահսկողություն «Չվարթնոց» օդանավակայանի անրոդրոմի շահագործողական վիճակի պահպանման նկատմամբ:

5. Մշակվել և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն /այսուհետ՝ ԻԿԱՕ/ է ներկայացվել տարեկան հաշվետվություն Հայաստանի Հանրապետությունում 2012 թվականին թռչունների հետ օդանավերի բախումների վերաբերյալ:

6. Մշակվել և ԻԿԱՕ է ներկայացվել «Չվարթնոց» և «Շիրակ» օդանավակայաններում գործող օդանավակայանային և անրոնավիզացիոն սակագների ցանկը՝ ԻԿԱՕ-ի Doc.7100 փաստաթղթում հրապարակելու համար:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի N1448-Ն որոշման N1 հավելվածի ընդունված փոփոխությունների հետ կապված ապահովվել է Հայաստանի Հանրապետության անրոնավիզացիոն տեղեկատվական ժողովածուի մեջ համապատասխան փոփոխությունների հրապարակումը:

8. Ուսումնասիրվել և ներկայացվել է եզրակացություն Հայաստանի Հանրապետության օդային տարածքի ոչ կառավարվող (G) գոտում, ավիացիոն աշխատանքների իրականացման նպատակով թռիչքների թույլտվություն տալու վերաբերյալ:

ՕՐԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

1. 2013 թվականի ընթացքում երկարացվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված թվով 6 (վեց) օդանավ շահագործողների «Օդանավ շահագործողի վկայական»-երի գործողության ժամկետները, 1 (մեկ) իրավաբանական անձի տրամադրվել է նոր «օդանավ շահագործողի վկայական» և «ավիափոխադրողի մասնագիր», 4(չորս) օդանավ շահագործողի՝ «ավիափոխադրողի մասնագրեր», 2 (երկու) օդանավ շահագործողների՝ նոր «օդային ուղու շահագործման թույլտվություն»:

2. Իրականացվել են ոչ կանոնավոր չվերթերի թույլտվության համար Գլխավոր վարչությանը ներկայացված հեռագրերի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություն և տրամադրվել է թվով 605 ոչ կանոնավոր չվերթերի թույլտվություն:

3. Համաձայն ներկայացված հայտերի իրականացվել են դեպի Հայաստանի Հանրապետություն կանոնավոր չվերթեր իրականացնող 40 օտարերկրյա ավիափոխադրողների 58 ուղղություններով չվացուցակների համակարգման և հաստատման աշխատանքները: Իրականացվել է օտարերկրյա ավիաընկերությունների Հայաստանի Հանրապետություն կանոնավոր և ոչ կանոնավոր (չարտերային) չվերթերի իրականացման համար անհրաժեշտ ներկայացրած փաստաթղթերի և դրանց կից փաթեթի ուսումնասիրություն և համապատասխան տվյալների մուտքագրում էլեկտրոնային տվյալների բազա՝ հետևողականությունը ապահովելու նպատակով:

ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված թվով 8 ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը և ներկայացվել են եզրակացություններ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի դրույթներին դրանց համապատասխանության վերաբերյալ:

ԻԿԱՕ «Անվտանգություն» N17 հավելվածի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի պահանջներին համապատասխանության նպատակով ուսումնասիրվել են նաև օտարերկրյա 27 ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի դրույթներին դրանց համապատասխանության վերաբերյալ ներկայացվել են համապատասխան եզրակացություններ:

2013 թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել է ավիացիոն անվտանգության մասով տեսչական ստուգումներ «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության օդանավակայաններում /«Չվարթնոց», «Շիրակ»/ և բացահայտված թերությունների ու անհամապատասխանությունների մասով համապատասխան առաջարկությունները ներկայացվել են վերը նշված օդանավակայանների տնօրինություններին:

2013թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում կազմակերպվել և անցկացվել է «Չվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների ավիացիոն անվտանգության ծառայությունների 299 աշխատողների ատեստավորում, որի արդյունքներով 295 աշխատողի գիտնելիքները գնահատվել է «համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» և նրանց տրվել են համապատասխանության սերտիֆիկատներ, իսկ 4 աշխատողներ գնահատվել են «չեն համապատասխանում զբաղեցրած պաշտոնին» և ազատվել են աշխատանքից:

ԵԿԱԿ «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթի պահանջների ուսումնասիրման նպատակով իրականացվել է «Սիբիր», «Աերոֆլոտ» ավիաընկերությունների կողմից «Չվարթնոց» օդանավակայանում օդանավերի նախաթռիչքային զննման աշխատանքների ուսումնասիրություններ և արդյունքների մասին ներկայացվել են նրանց կողմից իրականացվող անվտանգության միջոցառումների համապատասխանության վերաբերյալ եզրակացությունները:

«Չվարթնոց» օդանավակայանի անմաքս առևտրի խանութներում վաճառվող ապրանքների մատակարարման շղթայի անվտանգության ապահովման աշխատանքների ուսումնասիրման նպատակով համապատասխան տեսչական ստուգումներ են իրականացվել «ՄԱՊ», «Մարան», «Երևանի գինու, օղու, կոնյակի գործարան», «Վեդի ակո», «Երևանի Արարատ կոնյակի գործարան», «Իջևանի գինու գործարան», «Գետնատուն», «Աբրիկոն», «Արմենիա Վայն», «Պոռչյանին կոնյակի գործարան», «Երևան Գարեջուր», «Հայասի Գրուպ» ընկերություններում և բացահայտված թերությունների ու անհամապատասխանությունների մասով համապատասխան առաջարկությունները ներկայացվել են վերը նշված ընկերությունների տնօրինություններին:

2013 թվականի ընթացքում են ստացվել է 109 հայտ թռիչքային անցագրերի տրամադրման համար, պատրաստվել և ավիաընկերությունների օդանավերի անձնակազմերի անդամներին է հատկացվել 620 թռիչքային անցագրեր:

2013 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Նախագահի և արտասահմանյան երկրների բարձրաստիճան դեկավարների, ԱԺ նախագահի, Վարչապետի

մեկնումների և ժամանումների ընթացքում իրականացվել են միջոցառումներ՝ կապված չվերթերի անվտանգության ապահովման հետ: Ավիացիոն անվտանգության մասով ապահովվել է 50 Լիտեր <<Ա>> և 12 հատուկ չվերթերի սպասարկում:

Ուսումնասիրվել են ՀՀ օդանավակայաններով և ՀՀ օդային տարածքով վտանգավոր բեռների փոխադրման 80 հայտեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկներ փոխադրման թույլտվություններ տրամադրելու վերաբերյալ, իսկ մեկ հայտով ՀՀ օդային տարածքով վտանգավոր բեռների փոխադրման հայտը մերժվել է, քանի որ այն չի համապատասխանել ԻԿԱՕ <<Օդով վտանգավոր բեռների անվտանգ փոխադրումը>> թիվ 18 հավելվածի պահանջներին:

Իրականացվել է քաղաքացիական ավիացիայի համակարգում պետական պահուստի առկա գույքի և նյութերի պահպանության, ապաստարանների, կառավարման համանատարական կետի վիճակի երկու գույքագրում և համապատասխան արձանագրությունները ներկայացվել են Գլխավոր վարչության ղեկավարությանը: Պարբերաբար իրականացվել է <<Չվարթնոց>> օդանավակայանի վթարա-փրկարարային հաշվարկների մարտունակության վիճակի ուսումնասիրություններ փորձնական տազնապնների հայտարարման միջոցով /18 անգամ/, կատարվել է օդանավակայանում և ընկերություններում առկա փրկարարական գույքի ու հանդերձանքի վիճակի ուսումնասիրություններ:

2013 թվականի ընթացքում անհրաժեշտ աշխատանքներ են տարվել քաղաքացիական ավիացիայի համակարգում աշխատող զինապարտ պահեստագորայինների ցուցակների ճշգրտման, ամրագրման, ապամրագրման մասով /143 մարդ/ և նրանց տվյալները համապատասխան զինկոմիսարիատներ ներկայացման մասով, մշակվել և Գլխավոր վարչության պետի կողմից հաստատվել է <<<< կառավարությանն առընթեր ԲԱԳՎ 2013թ. գորահավաքային աշխատանքների Պլանը>>:

2013 թվականի սեպտեմբերին ապահովվել է ՀՀ Նախագահի գլխավոր ռազմական տեսչության տեսչական խմբի կողմից ՀՀ ԿԱ ԲԱԳՎ-ում անցկացված աուդիտի աշխատանքները և աուդիտի արդյունքերով բացահայտված թերությունների վերացման ժամանակացուցը ներկայացվել է ՀՀ գլխավոր ռազմական տեսուչին:

2013 թվականի հոկտեմբերի 8-ից 10-ը ապահովվել է մասնակցությունը <<Արձագանք-2013>> հրամանատարական-շտաբային ուսումնավարժանքին և քաղաքացիական ավիացիայի մասով ապահովել ուսումնավարժանքով նախատեսված առաջադրանքների կատարումը:

2013 թվականի ընթացքում մշտական վերահսկողություն է իրականացվել օդանավակայանների ավիացիոն անվտանգության ծառայությունների աշխատանքների նկատմամբ:

<<Չվարթնոց>> միջազգային օդանավակայանում պահպանության տակ վերցված է 213 օբյեկտ, հակահրդեհային պահպանության տակ վերցված է 74 օբյեկտ, գործում է 223 տազնապի ազդանշանային համակարգ, այդ թվում պահպանության 139 և հրդեհի 64 ազդանշան: Գործում է փակ հեռուստահսկման համակարգը /405 տեսախցիկ/, որի միջոցով իրականացվում է հսկողություն ուղևորների սպասարկման ողջ գործընթացի և օդանավակայանի վերահսկելի գոտիներում անցագրային ու ներօբյեկտային վերահսկողության կանոնների պահպանման նկատմամբ:

<<Չվարթնոց>> միջազգային օդանավակայանի հակահրդեհային ծառայությունն իրեն վերաբերվող մասով ապահովել է.

ա/ Լիտեր <<Ա>> չվերթեր - 50,

բ/ օդանավերի լիցքավորման աշխատանքներ - 317,

գ/ հարկադիր վայրէջքներ - 0,

դ/ շինվերանորոգման և եռակցման հակահրդեհային ապահովում -15,

ե/ հրդեհներ- /խոտի այրման դեպքեր/ - 7:

Օդանավակայանում պահպանության է վերցված 23 օբյեկտ, գործում է 2 պահպանության ազդանշանային համակարգ: Գործում է նաև փակ հեռուստահսկման համակարգը /16 տեսախցիկ/, որի միջոցով իրականացվում է հսկողություն ուղևորների սպասարկման ողջ գործընթացի և օդանավակայանի վերահսկելի գոտիներում անցագրային ու ներօբյեկտային վերահսկողության կանոնների պահպանման նկատմամբ: Պարբերաբար իրականացվել է <<Շիրակ>> օդանավակայանի վթարա-փրկարարային հաշվարկների մարտունակության վիճակի ուսումնասիրություններ փորձնական տազնապնների հայտարարման միջոցով /9 անգամ/,

կատարվել է օդանավակայանում և ընկերություններում առկա քաղաքաշտպանության, փրկարարական գույքի ու հանդերձանքի վիճակի ուսումնասիրություններ, օդանավակայանում հրդեհի դեպքեր չեն գրանցվել:

2013 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիական ավիացիայում անօրինական միջամտության դեպքեր չեն գրանցվել:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՈՒՄ

2013 թվականի ընթացքում Գլխավոր վարչության աշխատակիցները քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունների կողմից հաստատված ծրագրերի շրջանակներում մասնակցել են համապատասխան դասընթացների և ստացել <<Կիրերանվտանգություն>>, <<Ճգնաժամային իրավիճակների կառավարում>> և <<Չնման տեխնիկական սարքավորումներ>>, <<Բեռների և փոստի զննում>> <<Թռիչքային պիտանիության տեսուչ>>, << Վտանգավոր բեռների փոխադրում>>, << SAFA տեսուչի որակի բարձրացման>>, << Օդանավի շարունակական թռիչքային պիտանիության մոնիթորինգ>> որակավորման սերտիֆիկատներ:

«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ

1. 2013 թվականի նոյեմբերի 15-ից շահագործման է հանձնվել «Երևան» ՕԵԿ կենտրոնում տեղադրված «Գալակտիկա» ավտոմատացված համակարգը, վարժասարքը և «Մուլտիֆոնո Մ800ԻՊ» ձայնային համակարգը:

2. Ընկերությունը 2013 թվականին ապահովել է ՀՀ օդանավակայաններ չվերթող 8953 օդանավերի թռիչք-վայրէջքների անրոնավիգացիոն սպասարկում՝ այդ թվում “Չվարթոնց” Մ/Օ-ում՝ մոտ 8729 թռիչք-վայրէջք, իսկ ք. Գյումրու “Շիրակ” Օ/Կ-ում՝ 224 թռիչք-վայրէջք: Ընկերության կողմից ՀՀ օդային մայրուղիներում սպասարկվող ընդհանուր թռիչքների քանակը 2013թ-ի սպասվելիք տվյալներով կկազմի 52225 չվերթ:

3. 2013 թվականին ԻԿԱՕ-ի ուսումնական կենտրոններ որակավորման բարձրացման դասընթացների են մասնակցել 64 աշխատակից:

4. <<Ավիատուսումնական կենտրոն>> ՓԲԸ-ում որակավորման բարձրացման դասընթացներ են անցել՝ ՕԵԿ - ի գծով – 6 մարդ , անգլերեն լեզվով – 6 մարդ:

5. Ինքնուրույն աշխատանքի թույլտվություն է ստացել – 10 մարդ:

6. 2013 թվականի նոյեմբերի 6-ից 7-ը Երևանում տեղի ունեցավ EAD Տարածաշրջանային խորհրդաժողովը՝ նվիրված <<EAD կառույցի միջոցով ԱՏԾ-ից (AIS) ԱՏԿ-ի (AIM) անցման հնարավորություններ>>-ին:

7. «Կիրգիզաերոնավիգացիայի» հետ կնքվել են պայմանագրեր՝ Դրդատանում ԱՏԾ արդիականացման վերաբերյալ, որոնք իրականացվել են «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ ԱՏԾ մասնագետների կողմից:

8. Պատրաստվել և «Երևան» ՕԵԿ կենտրոնում է մուտքագրվել ՀՀ տեղագրական թվային քարտեզը և թվային անրոնավիգացիոն տեղեկատվությունը:

«Ավիատուսումնական կենտրոն» ՓԲԸ

2013 թվականի ընթացքում <<Ավիատուսումնական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորել են 114 ուսանող և վերապատրաստվել 408 ավիացիոն մասնագետներ (օդաչուներ, կարգավարներ, ավիահինժեններ, ավիատեխնիկներ, ավիաընկերությունների ներկայացուցիչներ և բորտ-ուղեկցորդներ):

Մշակվել են ուսումնական ձեռնարկներ, թեստեր, վերանայվել են բոլոր կրթական ծրագրերը, ներդրվել է <<Մարդկային գործոն և մարդկային ռեսուրսների կառավարում>> ծրագիրը օդաչուական անձնակազմի համար:

Խիստ կարևորելով դասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածության դերն ուսուցման որակի և ժամանակակից կրթական պահանջների ապահովման գործում՝ կենտրոնի

երկու դասախոս վերապատրաստվել են <<ԹՎիննինգ>> ծրագրի շրջանակներում, իսկ երկու դասախոս-ռեյթերներ՝ Կիևի ԻԿԱՕ-ի տարածաշրջանային ինստիտուտում:

Կենտրոնի գերակա խնդիրը եղել և մնում է օդայու-ուսանողների ուսումնալարժանքային պրակտիկայի իրականացումը: Պայմանագիր է կնքվել «Մեյն Ավիէյշըն Տեքնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ <<Diamond DA-40 TDI>> օդանավով թռիչքներն իրականացնելու համար, որի շրջանակներում իրականացվել է 210 ժամ ուսումնական թռիչքներ 5 ուսանողների համար:

«Ավիարուժ» բժշկական կենտրոն» ՓԲԸ

2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բժշկական հետազոտության են ենթարկվել 133 օդաչու, 72 բորտուղեկցորդ, 81 կարգավար, 1867 վերգետնյա ծառայության աշխատողներ, իրականացվել է 10356 աշխատողի նախահերթափոխային և նախաթռիչքային բժշկական ստուգում և 2182 սանիտարական հետազոտություն:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի
2009-2013 թվականների հիմնական արտադրական
ցուցանիշներ

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավորը	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2013թ. կատարողականը 2012թ. նկատմամբ%
1	Փոխադրված ուղևորներ	հազ.մարդ	1469.242	1664.431	1674.475	1763.383	1758.244	99.7
2	Փոխադրված բեռ և վոստ	տոննա	8407	8816	10034	12283	10365	84.4
3	Թռիչք-վայրէջքներ	հատ	8885	10056	10164	10645	8953	84.1
4	ՀՀ օդային տարածքով տարանցիկ չվերթեր	չվերթ	29622	32504	36264	34244	34513	100.8